Արձանագրության 6
Քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10.09.2019թ.
Ժամը՝ 11:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Տեր-Թորոսյան /գնահատող/
Ռ. Աբրահամյան /բացող/, Ա. Բալբաբյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝ Ա. Փլավչյան /գնահատող/

1. ԳԲՔԱ-ՆԳ-2019/69 բողոքի վերաբերյալ կայացրած որոշման մասին

(Ա. Բաղդիշյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է:

1.2 Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ուժը կորցրած ճանաչել սույն ընթացակարգի 28.09.2019թ. թիվ 2 արձանագրության 4.1 կետով ընդունած որոշումը և «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար, ուժը կորցրած ճանաչել նաև վերոնշված արձանագրության 7.1 կետը՝ 3-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին և ընթացակարգի 1,3,9 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Բաղդիշյան)

2.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի, «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

2.2 Ծանուցել «ՍԱՄԱԼԻ» ՍՊԸ-ին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների՝ տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի 3.1 հավելվածի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Բաղդիշյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Բաղդիշյան

Անդամներ՝ ..... Ռ. Աբրահամյան

..... Ա. Տեր-Թորոսյան

..... Ա. Բալբաբյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան